

ՄԻՆԱՍՏ ԳՈՐՈՎԱՂԷՏ ՎԱՐԴԱՊԵՏԻՍ ՄԵԾԻ
 ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆՆ ՄԱՅՐՆ
 ՇՆՈՐՀԱՅ

ԱՔՈՒՆ ԱՍՏՈՒԱՆԵԱՆ՝

Միածնին Աթոռ Շնորհաց
 Անուն ահաւոր,
 Մեծարեալ համայն ազանց
 Արիի լուսաւոր:
 Իսկակցին Հօր Աստուծոյ
 Ողից կոյարան,
 Քրիստոսեան մաքուր Հօտին
 Սուրբ ժողովարան:
 Նոր խորան գեր քան զերկին
 Աթոռ Անեղին,
 Բարձրագոյն խորք Անճառիցն
 Ի Քեզ տեսանին:
 Այսօր մեր որդիքս Քո
 Առ Քեզ ժողովիմք,
 Մայր Լուսոյ Էջք Աստուծոյ,
 Շնորհացդ կարօտիմք:
 Սրբութեանց սրբոյն Տեղի
 Թակազ ամպեղէն,
 Հրանիւթ կառք Դու Բարձրելոյն
 Երկինք լուսեղէն 1:

Կերագոյն Խորհրդարան
 Երկնից հարսնարան,
 Փեսային գահոյք լուսոյ
 Սիրոյն վառարան:
 Էջմիածին քաղցրիկ անուն
 Դրախտ երկնային,
 Դու պարտէզ շուշանաբեր
 Ծաղիկ ծովային:
 Ուռճացեալ ծառ բարձրաբերձ
 Ուռ ողկուղաբեր,
 Նանենիք Ի Քեզ անթիւք
 Զորս երկամբք բերեր:
 Բենական սիրով լցեալ
 Եղբօր Քոյ որդւոյ,
 Պաղատիմք միշտ տալ և մեզ
 Զհամբոյր Քո սիրոյ:
 Քօղազարդ սուրբ առագաստ
 Հնձան գինեւէտ,
 Իմաստից Քոյին արժան
 Արա զմեզ յաւէտ 2:

1. Առաջին այս հինգ տներն սկզբնատառերը կազմում են «Մինաս»:

2. Մինչև այստեղ — Գէորգ:

Իջման փեսային մայլթեան
Գալ առ մեզ սիրտով,
Ըստ իջման նախկին սիրոյն՝
Որ առ Քեզ լուսով:

Գազանաց կոխան եղաք
Ո՛վ մայրդ փառաց,
Ազուէսունք գիշատեցին
Զսունկս սլարտիղաց:

Նաև հողմք հիւսիսայինք
Յար առ մեզ փչեն,
Զնշեննիս և զնոնենիս
Ծաղկաթափ առնեն:

Ա՛րդ ժամ է մեզ հարաւոյ
Քաղցրաշունչ օդոյ,
Գոնէ ինչ խունկ մատուցուք
Փեսային սրբոյ:

Տէրն մեր պտուղ խնդրէ
Օրիորդքն ննջեն,

Ազուէսունք խլրտացեալք
Զհոգիս մեր զրկեն:

Իջցէ արդ եղբօրորդին
Զայնիւ բերկրական,
Լցուցէ զմեզ պտղովք
Իւրն հաճոյական:

Ո՛վ Մայր անարատ ամբիժ
Սուրբ Էջմիածին,
Ընկալ արդ զորդիքս Քո
Որք աստ պաղատին:

Սուրբ ստեանցդ արժան արա՛
Շնորհացդ անխարդախ,
Զվերագրեալ անուանակիրքս
Որք տապիմք յաճախ*:

Էակցին Հօր անսահման
Միշտ փառք յաւիտեան,
Որ լուսով զՔեզ կազմեաց
Տաճար Տէրունեան:

«Էջմիածինն ի Հօրէ

Եւ լոյս փառաց ընդ նմա,

Զայնք հնչեցին

*. Մինչև այստեղ սկզբնատառերը կազմուած են՝ «Իգնատիոս»: